Next, Rev. Kevork Terian, the former senior pastor of the Armenian Cilicia Evangelical Church, took to the podium and spoke about Armen's dedication to his clients, whom he took on a pilgrimage to their ancestral lands in Western Armenia.

I could attest to this firsthand, as my wife and I went to Western

Armenia with Armen Aroyan in the Fall of 2007. We began our tour from Istanbul and one of the sites that we visited was the tomb of the newly assassinated Armenian newspaper editor, Hrant Dink. Armen Aroyan made an extra effort to take the group to each participant's ancestral home. Thus, we visited the village of Gemerek, the birthplace of my mother in law's parents, in the province of Sivas (Sepastia).

Among other places that we visited was the village of Peri in the province of Kharpet, where my father in law was born. The group was gathered around the fountain in the village's main square, while I was chatting with some of the local villagers. There, I learned that the valley nearby was called the valley of Dakess, after my father in law's family name, Dakessian.

When I mentioned this to Armen, on the way back, he made an extra effort to go back and visit the same valley. Then my wife recalled that her aunt used to tell her about her father being slain on top of the hill that belonged to him and dragged down to the river Euphrates. Talk about emotions and deeply hurt feelings, that surfaced with this sudden revelation. Its hard to put into words, and we have Armen to thank for the experience.

The cultural program included a dance performance presented by members of Patil Dance Academy and a musical recital presented by Vem Musical Ensemble of UCLA, under the direction of Movses Boghosian.

Peter Cowi, UCLA Narekatsi Professor of Armenian Studies, was the Keynote Speaker. He dwelled upon Armen Aroyan's vast knowledge of the historical sites in Western Armenia, including the churches, the monuments, the famous convents, and the scattered cemeteries. Unfortunately, some of those sites were in such ruins that they were hard to identify.

In his closing remarks, Rev. Megerditchian thanked everyone for attending the ceremony and noted that the Armen Aroyan Library-Museum will be utilized in the future for lectures, recitals, and exhibitions on a regular basis. He then invited Armen Aroyan to cut the ribbon and invite the guests to visit the Library-Museum.

NASA's first Armenian astronaut James Baghian, who will be paying his

first visit to Armenia, iPod creator Tony Fadell and others.

Arshile Gorky's New Painting Was Hiding in Plain Sight



NEW YORK — A pair of conservators uncovered a lost Arshile Gorky canvas behind a painting on paper by the late Abstract Expressionist during routine maintenance, news.artnet.com reports.

“This discovery is the sort of moment that drew so many of us to art in the first place—the wonder and surprise, the invitation to think beyond what we already know, hints of new horizons,” Marc Payot, president of Hauser and Wirth, which will debut the work in a non-selling exhibition in New York next month, told [Artnet News](https://www.artnet.com) in an email.

The painting, which has been dubbed *Untitled (Virginia Summer)*, is being added to a new Gorky catalogue raisonné, due out this month from the artist’s foundation.

When Armenian American artist Arshile Gorky finished the painting on paper, *The Limit* (1947), he was in quite a prolific period, making a new work every day. As a result, it appears he was short on materials, and, lacking a stretched canvas to work on, simply placed it atop the earlier work now identified as *Untitled (Virginia Summer)*.

It’s quite possible that this isn’t the only painting the artist obscured this way. “Curators of museums: It’s not a bad idea to take it out of the basement or off the wall, look behind, and see if you’ve got two paintings instead of one,” Matthew Spender, the artist’s son-in-law and author of *From a High Place: A Life of Arshile Gorky*, told the *New York Times*.

Arshile Gorky, *Untitled (Virginia Summer)* ca. 1946–47. Photo by Jon Etter

Gorky used glue along the edges and kraft paper tape, an adhesive designed for easy removal, to affix *The Limit* onto the canvas, presumably as a temporary measure. But when the artist died the following year, Virginia Summer stayed covered, lost to art history for over seven decades.

Conservators Michaela Ritter and Olivier Masson of the Swiss restora-

tion studio Masson and Ritter undertook the painstaking work of peeling back *The Limit* to reveal the painting underneath. They then constructed a new stretcher on which to safely display the delicate work on paper.

The find is all the more remarkable considering Virginia Summer was hanging quite literally in plain sight at some of the nation’s most prestigious museums. The foundation has loaned *The Limit* to both the National Gallery of Art in Washington, D.C., and the Philadelphia Museum of Art, the latter for a major retrospective of the artist in 2009 and 2010.

On the other hand, the discovery wasn’t entirely unexpected. Gorky’s daughters Natasha Gorky and Maro Spender had already noticed one of the corners of *The Limit* had come unstuck. Clearly, there was paint underneath.

Conservators had long been deemed too risky to try and see what was really under there, but with a lighter work schedule due to the pandemic, Ritter and Masson were able to take the time to do it carefully. As they worked, they came to realize the canvas contained a completed late masterpiece by the artist, an aqua-colored abstract canvas filled with biomorphic shapes.

At the time, Gorky was experimenting with new techniques, mixing oil and turpentine for a more fluid, expressive style.

“Gorky was incredibly inventive in his last years,” Payot said. “This painting gives us additional insight into his own revelations and wonder at that time. It’s thrilling for us to share a newly found masterpiece with the public, as well as scholars and artists who have long loved and been inspired by Gorky’s work.”

Because the work had never been exposed to light, the colors remained as vibrant and fresh as the day Gorky painted them. “[It was] like an explosion compared to *The Limit*,” Masson told the *Times*. “It was so well protected. I would say it’s in mint condition.”

No Meeting Planned

Continued from page 1

ing in Moscow on January 11, 2021, which, he said, had nothing to do with the text eventually adopted.


The Armenian government reacted over the weekend to reports that the leaders of Armenia and Azerbaijan will meet in Moscow next month to sign two more far-reaching agreements.

Aliqmedia.am said that Russian President Vladimir Putin will host on November 9 fresh talks between Pashinyan and Aliyev that will be timed

to coincide with the first anniversary of a Russian-brokered deal that stopped the war in Nagorno-Karabakh.

Citing unnamed Armenian diplomatic sources, the publication claimed that Aliyev and Pashinyan will sign two agreements envisaging the demarcation of the Armenian-Azerbaijani border and the opening of transport links between the two South Caucasus states. It said one of those documents will also commit Baku and Yerevan to recognizing each other’s territorial integrity.

In View: The New Western Armenian Culture Program



արդ եւս / In View is a new grant program dedicated to culture and creativity in the Western Armenian language. It is launched by the Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation. Through this new flagship initiative, the Department will support cultural production in Armenian, seeking to reinforce the intrinsic relationship between language and culture. Western Armenian will be the main vehicle of creation.

Culture and identity, especially in diasporan contexts, constantly evolve. Each generation creates its own culture, building on the achievements and aesthetics of the previous generations. The Foundation wishes to support this process of innovation, creation and identity (re)formulation by providing Armenian creatives the opportunity and the means to express themselves through any medium and in ways relevant to their current realities.

There is a pressing need for a strong and vibrant contemporary culture in Western Armenian. The most effective way to ensure the vitality of any endangered language is to generate new culture in it — a culture that is

relevant to and created by younger generations. Armenian language and culture cannot remain in seclusion while we constantly witness paradigm shifts in global dynamics, technological innovation at breakneck speeds, fluid identities and environmental catastrophes. It is imperative that the language and culture constantly engage with the world in order to thrive, remain vibrant and relevant.

More specifically, the aim of the **արդ եւս** | in view program is to give creative minds the chance to develop contemporary cultural initiatives conceived and implemented in the Western Armenian language.

արդ եւս | in view encourages creative expressions of ideas, experiences, and emotions in a wide range of media, including the arts (visual, performing), interdisciplinary and hybrid forms of expression, literature, critical essays and graphic novels, videos, installations, animation, new music, creative broadcasting, and any other form of cultural expression in Western Armenian.

For more information and to apply visit the website <https://gulbenkian.pt/armenian-communities/>

Armenian President Pays Historic Visit

Continued from page 1

Saudi Arabia.

President Sarkissian took a historic step, paying the first-ever visit to a country with a unique role in the Arab and Islamic world.

At the airport in the capital of Saudi Arabia, Armen Sarkissian was greeted at the highest state level. He was welcomed by the Minister of State for Foreign Affairs of Saudi Arabia Adel al-Jubeir, and according to the official protocol, the state flag of the Republic of Armenia was raised at the airport.

President Sarkissian attended an international conference in Riyadh and spoke with Saudi Arabia’s de facto

ruler, Crown Prince Mohammed bin Salman.

Sarkissian sat next to Crown Prince Mohammed at the opening ceremony of the Future Investment Initiative forum held later in the day and also attended by other foreign leaders. The presidential press office reported on Wednesday that the two men talked to each other during the event.

“The President of Armenia and the Crown Prince of Saudi Arabia talked about the need to develop relations between the two countries and their future,” it said. “It was noted that the rich historical ties between the two peoples are a good basis for building future interstate relations.”

Cyprus-Armenia Relations Discussed

Continued from page 2

the invaluable role of the Armenian community in the public and political life of Cyprus.

Reference was also made to the full use of the opportunities provided by the Armenia-EU Comprehensive and

Enhanced Partnership Agreement in the context of the development of Armenia-EU relations.

The interlocutors discussed the investment opportunities of the Cypriot side, emphasizing the importance of economic and tourism cooperation with Cyprus.

Աւագ

ՆՈՐԱՅՐ ՏՍՏՈՒԲԵԱՆ

Բառ մը, որ կը ծնի մայրենիի պտղաբեր արգանդին մէջ կամ կը վայելի անոր գուրգուրանքը, եթէ որդեգրուած էր ան կ'ապրի մեծ-նալու կիրքով: Ինչպէս խոհարար մը, որ տարիներու փորձառութեան է, եփելէ, տապիկէ, խաշելէ, խառկելէ եւ խորովելէ յետոյ կը դառնայ «Աւագ խոհարար», նաւաստին՝ «Նաւակի աւագ», գինուորականը՝ «Աւագ սպայ», «Աւագ զօրավար» կամ «Աւագ հրամանատար»: Այսօր, յարգելի ընթերցող, կը վայելնք «աւագ» բառի ողիսականը: Անոր պատմութեան մէջ դուք գրական մեծութիւններէ աւելի պիտի տեսնէք համեստութիւն մը, քանզի այդ բառը չսիրեց ըլլալ բարձրաձայն, ո՛չ ալ ունեցաւ ամէն գիրքի եւ գրականութեան մէջ յայտնուած ըլլալու հաւակնութիւնը: «Աւագ» բառը, որ «մեծ, երեւելի եւ պատուական» պէտք էր որ ըլլար, իր ամբողջ պատմութեան մէջ պահեց մեծերուն յատուկ ծանրակշիռ լուծութիւն մը: Ահա անոր գուսպ ողիսականը:

Անյայտ է «աւագ» անականի ծագումը: Բազմաթիւ այբեր փորձեր են անոր լեզուական պատկանելիութիւնը ստուգել: Բոլոր ջանքերը մինչեւ այսօր կը մնան ապարդիւն: Սակայն, բառի մը արժէքը, յարգելի ընթերցող, մենք չենք չափեր իր բնիկ հայկական կամ փոխառութիւն ըլլալու հանգամանքով: Մենք կը սիրենք ծառայատէր բառեր, այն բառերը, որոնք մեր մտքի ու սրտի խորութիւններուն թարգմանն են: Այդ դասակարգի բառ է «աւագ»:

«Աւագ» բառը, ըստ մեր բառարաններու եւ հասկացողութեան՝ տարիքով մեծն է, երէցը, ամենամեծը, գլխաւորը, կոչումով եւ պաշտօնով աւելի բարձրը: Ան երկրի դիւանագիրտական կազմի պարագլուխն է, ինչպէս նաեւ ազնուականութեան բարձր խաւին պատկանողը: Ուսումնական կեանքի մէջ վերջինն է ան, ինչպէս «Աւագ դասարան» եւ «Աւագ դպրոց»:

Գրաւոր հայերէնի անդրանիկ ստեղծագործութիւն Աստուածաշունչի մէջ հայկական բազմաթիւ բառեր երբ կը յայտնուին հարիւրաւոր անգամներ, «աւագ» անականը եւ անոր բաղադրութիւնները կը ներկայացան աւելի նուազ քան քսան անգամ: Սուրբ Գիրքի մէջ կայ «աւագամեծար», «աւագափող», «աւագոյթ», «աւագութիւն» եւ պատմական մեծ նշանակութիւն ունեցող «աւագանի» բառերը:

«Աւագ» բառի համար բաղադրեալ բառերու թիւի մէջ ալ չէր մեծութիւնը, այլ ծառայութեան վսեմութեան մէջ: Դուք ինձի իրաւունք կու տաք, երբ հիմա

կարդաք, թէ հայը «աւագ» բառը ո՛ւր եւ ե՛րբ գործածեց. «Աւագ շաբաթ», «Աւագ Ուրբաթ», «Աւագ սեղան»: Ինչպէ՞ս նկարագրել գերապատիւ ու վսեմական տաճարները: Այդ նպատակով շինեցինք մէկ այլ ըստիւր անական՝ «Աւագամեծար»: Նոյն օրերուն հայկական նշանաւոր հեծելազօրքը ունէր իր գլխաւորը՝ «հեծելաւագ»: Նախարարական Հայաստանի մէջ ունէինք աշխարհիկ ազնուականութեան վերնախաւ՝ «աւագանի», առաջանակարգ եւ հօգր նահապետները, նախարարները եւ տանուտէրերը: Այս բառը նաեւ մարդացաւ: Ունեցանք՝ աւագ քահանաներ, աւագ հոգեւորականներ եւ աւագ եղբայրներ, մեր պետականութեան հին փառքի օրերուն՝ «Աւագ իշխանք Հայոց»: 13րդ դարէն սկսեալ որոշեցինք մեր գաւազները անուանել Աւագ: Նման որոշում մըն ալ տուեր էին գերմանացիները իրենց գաւակները մկրտելով Max, որ կը յառաջանայ լատիներէն maximus՝ «մեծագոյն» բառէն: Հայկական Աւագը ունեցաւ երեք «գաւակ». Աւագշահ, Աւագպարոն եւ Աւագտիկին: Վերջինները շատ ժողովրդականութիւն չվայելեցին, սակայն Աւագ անունը եւ Աւագեան մականունը կը շարունակեն անուանացանկերու վրայ մնալ: Հին օրերուն ծերութիւնն ալ ունէր իր վսեմութիւնը, ան կը կոչուէր «Աւագոյթ»: Իգականացաւ նաեւ բառը, դարձաւ՝ «աւագուհի», այսինքն առաջնորդ կուսան կանանց, վանաց տիկինն, կամ մայրն հաւատաւորաց: Եթէ աշխարհական էր այդ աւագուհին, ան անկասկած իշխանուհի էր կամ «տիկին քաղաքին»: Միջնադարուն գոյութիւն ունէին նաեւ, ներեցէք արտայայտութիւնս, հայհոյող հայեր գաղտնիք չէ: Ոստիկան մը պէտք էր այդ անշնորհք վարքին վրայ հսկելու համար: Հայկական աւագանին հետեւաբար ստեղծեց նոր պաշտօն՝ «յիշոցաւագ», մեր լեզուի եւ բառերու անբարոյական ու կոշտ գործածութեան պատժիչները:

«Աւագ» բառը հայկական ճարտարապետութեան տուաւ երկու գեղեցիկ հասկացողութիւն. «Աւագ խորան» եւ «Աւագ դուռ»: Առաջինը, կիսաշրջան յատակագիծով տաճարի արեւելեան խորանն է, ուր ժամասացութիւնը կը կատարուի: Վրան ունի կիսագուռ զմբէթարդ: Ան բարձր է աղօթարար հասակէն ու կը ներառէ դասը: Ան է եկեղեցւոյ ամենէն յարգարուն մասը: Իսկ «Աւագ դուռ»ը միայն իր չափերով ու յարգարանքով չէ որ աչքի կ'իյնայ. ան իշխանութիւն է:

Հայկական գաւառներու մէջ «աւագ» բառի իմաստը անսպասելի ուղղութիւններով զարգացաւ: Ամասիոյ հայկական բանահիւսու-

թեան մէջ յատուկ ու պատկերալից տեղ ունի «Աւագ Ուրբաթ» արտայայտութիւնը: Ան, «Նաչեղութեան օր» ըլլալէ բացի, կը նշանակէ՝ տիրադէմ, անժպիտ մարդ, մութ տեղ, մութ սենեակ եւ սեւամորթ:

Հագուածքի «աւագ» բառի հայկական հին կամ նոր գրական գործածութիւնը: Աւագ մէկ շաբաթ պէտք է, որ մէկը, յամառ պրպտումներէ յետոյ, անոր հետ գրի առնուած տող մը կամ տող մը յայտնաբերէ: Եթէ յաջողեցաւ, գայն կոչեցէք՝ «Աւագ գիւտ»: Ահաւասիկ այդ տեսակ գիւտերու ընտրանի մը. «Զայն կամար ուներն տէր Ստեփանոսին / Որպէս թէ կամար էր քաշած աւագ խորանին»: Սխալ չլսեցիք յարգելի ընթերցող, այդ «աւագ խորանի կամարի նման յօնք» ունեցողը գեղեցիկուհի մը չէր, այլ՝ աւագ հոգեւորական, Սիւնեաց եպիսկոպոս Տէր Ստեփանոսը ու այս բանաստեղծութիւնը դասուած է հայկական միջնադարեան պատմական լաւագոյն ողբերու ցանկի մէջ, հեղինակը՝ Պողոս Նաչատրեան: Սարգիս վարդապետ անուանեալ բանաստեղծ հոգեւորականը նկարագրեց Երուսաղէմի մեծ ու արեւափայլ Ս. Յակոբ վանքը. «Սրբոց խորանք շուրջանակի, / Որպէս գշարս մարգարտի, / Աւագ սեղանն գեր քան գարփի, / Աստուածային լուսովն է լի»: Ստեփան անուանեալ տաղասացը նկարագրեց Վանայ Ս. Նշանը. «Ի ծովակիրն Վասպուրական, / Սքանչելի աւագ Սուրբ Նշան»: Հայկական քերթողութեան աւագը, Հ. Ղեւոնդ Ալիշանը բանաստեղծութիւն նուիրեց Մասիսին ու գայն կոչեց՝ «Աւագ Մասիսին» «Շարժի՛ր, հա՛ շարժի՛ր, Աւագը Մասիս, / Արձան պարծանաց Հայոց աշխարհիս»:

«Աւագ» բառը մեծութիւն մը ցոյց տուաւ ու 1808 թիւականէն սկսեալ յօժարեցաւ յայտնուել հայկական գիրքերու կողքին վրայ:

Սակաւաթիւ են այդ հրատարակութիւնները, սակայն ընտիր եւ յիշարժան. «Ժամակարգութիւն աւագ շաբաթուն եւ ութօրէից Ջատիկն», Թրեւստ, 1808, «Ճառ վասն աւագ ուրբաթու», Կալկաթա, 1828, «Քարոզ աւագ ուրբաթ օրին համար», Շուշի, 1833, «Աւագ Երկուշաբթի / Երեքշաբթի / Չորեքշաբթի / Հինգշաբթի / Ուրբաթ», Թէոդոսիա, 1868, «Աւագ շաբաթ», Նիւ Եորք, 1918, «Երանելի Տէր Կոմիտաս Քէօմիւրճեան աւագերեց Սամաթիոյ նահատակ», Պէյրութ, 1929:

«Աւագ» անականը հայկական ժամանակակից գրականութեան մէջ գրեթէ անտեսանելի է: Համօ Սահեանն էր, որ մէկ անգամ գայն գործածեց՝ նկարագրելու համար գիւղական առտնին պատկեր մը, ուր ընտանիքը ընթերցու համար «պապ»ին կը սպասէ. «Մէկը մէկից ամաչելով, / Եւ գուսպ, եւ հաւաք, / Նստում էին մերոնք կարգով / Կրտսեր ու աւագ»: Իսկ, մեծերուն յատուկ վարքով մեր աւագ բանաստեղծները ուրիշներուն կոչեցին աւագ, ինչպէս Պարոյր Սեւակին. «Մեր սերնդի բանաստեղծների մէջ ամենից կրտսերն էր նա, բայց աւագագոյնն էր վաստակի ու հանճարի առումով», Համօ Սահեան, «Չորեքշաբթից յետոյ ոչ մի բանաստեղծ՝ աւագ թէ երիտասարդ, մեր գեղարուեստական մտածողութիւնն այդպէս չի մղել յառաջ, ինչպէս Պարոյր Սեւակը», Ռուբէն Զարեան:

Դանդաղօրէն, եւ ամենայն լրջութեամբ, «աւագ» բառը կը պատրաստուի, կասկած չունիմ, իմաստի եւ իմաստասիրական նոր մեծութիւններ ծնանելու: Մինչեւ որ հասնի այդ պայծառ օրը, մենք շարունակենք վայելել հայկական այլ բառերու խորհրդաւոր պատմութիւնները: Մնացէք խաղաղ մինչեւ նոր հանդիպում:

«ԱԿՕՍ»

ARMENIAN FESTIVAL 2021

ORGANIZED BY
THE CONSULATE GENERAL OF ARMENIA IN LOS ANGELES

VENUE: ARTSAKH AVENUE, GLENDALE, CALIFORNIA

SATURDAY, DECEMBER 11, 2021

FROM 10:00 AM TO 10:00 PM

FREE ADMISSION

EVERYTHING ARMENIAN: HIGH-TECH PRODUCTS, SOUVENIRS, ART, JEWELRY, CULTURAL PROGRAM, FOOD COURT AND BEVERAGES

OFFICIAL PART OF THE PROGRAM STARTS AT 6:00 PM

Join and check out the best from the Homeland and Western U.S.

For booth rental call: (818) 245 - 5220 or email:
armfest2021@gmail.com

SPONSORSHIP OPPORTUNITY: DIFFERENT PACKAGES
FOR THE FESTIVAL SPONSORSHIP CALL (424) 355 - 5121 or email:
armfest2021sponsorship@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ՇԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

ԱՊՅ Երկրների «Անճողների ճակատը»

Շարունակուած էջ 2-էն

րի ընկած մեր գինուորների ո՛չ աւելի, ո՛չ պակաս՝ նա որակեց ահաբեկիչներ, ու թէեւ, իր խօսքերով, պատերազմն աւարտուած է, ու «կոնֆլիկտը՝ լուծուած», նա շարունակուած է պահել նրանց՝ ամէն անգամ մէկնուածէկին փոխանակելով իր ցանկութեան դիմաց որեւէ բանով: Ընդ որում՝ գերիները վերադարձուած են խոշտանգուած, հիւծուած ու տանջահար, ոմանք՝ արդէն իսկ գլխատուած կամ սպանուած: Նա գանգաւոր է, որ քարտէզները 25 տոկոսով են ճշգրիտ արտայայտուած իրականութիւնը, եւ աւելի քան 150 ատրպէյճանցի պայթեւի ականների վրայ՝ ոտք դնելով Արցախի հողին, այսինքն՝ Ալիեւին թուած է, թէ հայ ժողովուրդը պաշտպանութեան իրաւունք չունի ի կարող սեփական հողը պաշտպանել զաւթիչներից: Մինչ մեզանից թաքցուած է Ատրպէյճանում հայ գերիների թիւը եւ թէ նրանց մէջ կա՞ն, արդեօք, կանայք, մեր կողմում ոչ մի ատրպէյճանցի գերի չկայ, ուստի եւ դրանց փոխանակման մասին հարց չի դրոււմ:

Ալիեւը բարձր ամպիոններից խօսում է խաղաղութիւնից, ու հենց այդ նոյն պահին հրետակոծուած են հայկական շէներն ու գիւղերը, սահմանային դիրքերը, այսինքն՝ «խաղաղութիւն» ասուածն ատրպէյճանական տէրմիաբանութեամբ բոլորովին այլ նշանակութիւն ու կիրառութիւն ունի: Ելուցի վերոյիշեալ հատուածները՝ աշխարհի աչքը փակելու համար, իսկ մնացածը, որ արդէն ոչ թէ գանգաւոր, այլ ուղղակի մեղադրանք է՝ ծառայում է որպէս նպատակային թիրախ՝ աշխարհը վերաբաժանելու թուրքական ծրագրի իրագործման ճանապարհին: ԱՊՅ երկրների «անճողների ճակատը» փորձում է սեպ խրել անդամ երկրների ու նրանց հնարաւոր դաշնակիցների միջեւ: Երբեք, առանց փաստ ու փաստարկի, միջազգայնորէն ընդունուած նորմերը անտեսելով ու դատաւորի կեցուածքով, յայտարարում է, թէ Հայաստանն ու իրանը համատեղ զբաղուել են թմրամիջոցների թրաֆիքինգով: Իհարկէ, նրան ձեռնառու չեն ո՛չ հայ-ուսական, ո՛չ էլ հայ-իրանական յարաբերութիւնները, եւ նա

ամէն կերպ ջանում է ոչ միայն մեկուսացուած պահել հայերին՝ դարձնելով նրան առաւել խոցելի, այլեւ իրանին՝ զրկել տարածաշրջանում դերակատարութիւնից, իսկ ռուսների դէմ դեռեւս չի համարձակուած ակնառու բարբաջել սոսկ այն պատճառով, որ Ռուսաստանը չմիաւորուի այլ ուժերի հետ՝ ընդդէմ Ատրպէյճանի. այլ կերպ՝ Ռուսաստանին էլ այսպէս է փորձում «մեկուսացնել» հնարաւոր դաշնակիցներից, յատկապէս իրանից, որը հնարաւոր է միաւորուի Երկրորդ համաշխարհային պատերազմում յաղթած տերութիւնների հետ՝ լուրջ խոչընդոտ դառնալով էրտողանի՝ աշխարհի քարտէզը վերաձեւելու աշխարհակործան ծրագրի իրականացման ճանապարհին: Իսկ որ այդ ծրագրին արդէն իսկ առաջընթաց արձանագրել Ռուսաստանից նրա պողոտաներում գոտիներն բաժանելու հարցում, ակնառու է Ուրբարի նայի, Վրաստանի օրինակով եւ այսօր էլ նրանից Հայաստանը բաժանելու փորձերով:

Ասել, թէ այդ վտանգը չեն գտնում ԱՊՅ երկրները, միամտութիւն կը լինի. հենց միայն այն, որ Պելաոուսն ու Ռուսաստանը միութիւն կազմեցին, վտանգն զգալու եւ պաշտպանուելու վառ օրինակ է: Ռուսաստանի եւ Պելաոուսի պաշտպանութեան նախարարութիւնների համատեղ կոլեգիայի նիստում Սերգեյ Շոյգուն ընդգծել է. «Ընդլայնուած է ՆԱՏՕ-ի բոլոր առաջաւոր ներկայութիւնը Ռուսաստանի եւ Պելաոուսի միութենական պետութեան սահմանների մօտ, կատարելագործուած է նրա ռազմական եւ թակառուցուածքը, ստեղծուած են սպառազինութեան, ռազմական տեխնիկայի եւ նիւթական միջոցների պաշարներ, մշակուած են զօրքերի տեղափոխման միջոցառումներ...»: Չմոռանանք թուրքերի ներկայութիւնը ՆԱՏՕ-ի անդամ երկրների ցանկում եւ չմոռանանք, թէ Արցախի դէմ Ատրպէյճանի տարած յաղթանակի հարցում ինչ դերակատարութիւն ունեցաւ թուրքիան, եւ ում է պարտական իր յաղթանակով Ատրպէյճանը, եւ ում ասեղն է թելում Ալիեւը՝ օգտագործելով բարձր ամպիոնները...

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»

Դամասկոսի ՅՄՍ-ի Ակումբի Սրահը

Շարունակուած էջ 7-էն

կայացուցիչներ, Ս. Սարգիս եկեղեցուց ազգային մարմիններու անդամներ, ՀՄՄ-եան մեծ ընտանիքի անդամներ եւ Դամասկոսայեցի:

Յայտագիրը սկսաւ մէկ վայրկեան լուռութեամբ՝ յարգելով մեր անմահ նահատակներուն յիշատակը: Ապա՝ ուժգին Հնչեցին Սուրբական եւ Հայաստանի քայլերգները:

Բացման խօսքով եւ բեմավարութեամբ հանդէս եկաւ ընկհ. Անոյշ Բէրթոլէան Մարաշլեանը:

Ապա կարճ բացատրական տեսաերկ մը ցուցադրուեցաւ ներկայներուն, որ պատրաստած էր ընկհ. Անդրանիկ Մարաշլեան, սրահին նորոգման եւ զարգացման հանգրուաններուն մասին: ՄԴՀԿ-ի Սուրբիոյ Հարաւայի Շրջանի Վարիչ Մարմինը, պարծանքով լինեց եւ պարգևատրեց սրահի նորոգութեան բաժին բերող այն բարերարները, որոնք ակումբի նորոգութեան գործին համար, իրենց լուծմաները չինսպասեցին:



Տէր Արմաշ եպս. Նալպանտեանը, ընկհ. Վազգէն Համալեանը ու ընկհ. Յովսէփ Խոյտեանը պարգևատրութիւնները բաշխեցին հետեւեալ բարերարներուն կամ երկրէն դուրս ըլլալու պարագային անոնց հարազատներուն: Ռաֆֆի Գէորգեան, Վանիկ Ճիլիլեան, Տիրար Հրայր Խէչօ՝ Տիրար Վահէ Մնճարեան, Ընկեր Աւետիս Ջուլֆայեան, Ընկեր Ճօրճ Թաւուզեան, Տիկին Մարիա Յովակիմեան Չարքեան, Ընկեր Կարապետ Ղարիպեան, Ընկհ. Աւետիս Ղարիպեան, Ընկհ. Ռաֆֆի Ղարիպեան, Ընկեր Շաւարշ Ակինեան, Տիրար Հայկ Օգոստեանը:

Նաեւ յատուկ շնորհակալութեան խօսք յայտարարուեցաւ Վարիչ Մարմինի անդամներէն՝ ընկհ. Արա Քարլոզեանին, ընկհ. Սարգիս Գասարեանին եւ ընկհ. Տիրար Ստեփանեանին, որոնք ջանք չինսպասեցին, հսկելով բարենորոգման այս հսկայական աշխատանքը:

Եւ վերջապէս յատուկ շնորհակալական խօսք յայտնուեցաւ, յանձինս մեծ բարերար ընկեր Վազգէն Գալթաքեանին, որ տասնէթը տարիներ առաջ Միացեալ Նահանգներէն մեծ գումար մը տրամադրած էր այս գործին համար:

Տիկ. Արմիկ Ակինեան Պարսուսեան շատ ազդու ձեւով ներկայներուն իր սրտին խօսքն ու շնորհաւորանքները փոխանցեց:

Արաբերէն լեզուով շնորհակալութեան խօսք յայտնուեցաւ՝ այն արաբախոս երկրաշափններուն եւ աշխատողներուն, որոնք այս գործին մէջ իրենց ներդրումը բերին: Սուրբիոյ Համայնքապետ Վեր. Յարութիւն Սելիմեանին կողմէ զրկուած ծաղկեկողովը յայտարարուեցաւ, իսկ շնորհաւորագիրը կարդացուեցաւ: ՄԴՀԿ-ի Կեդրոնական վարչութեան փոխ նախագահը՝ Ա. Պետ Ընկեր Վազգէն Համալեանը՝ փոխանցեց Կեդրոնական վարչութեան շնորհաւորանքներն ու սրտի խօսքը: Ան ըսաւ. «...Տարբեր սերունդներ եկան ու անցան այս ակումբէն: Շատ սուղ հոգիներ, որ այսօր աչքիս առջեւ կուգան, մեծ մասը հանգուցեալ եղած են, մաս մը ճամբորդած են, բայց այսօր բոլորին հոգիները կը համախմբուին հոս եւ մեր ուրախ հանդիպմամբ, կը կիսեն մեր ուրախութիւնը, կը կիսեն մեր յաջողութիւնը եւ կը կիսեն նաեւ մեր նպատակադրուած աշխատանքային ծրագրերը, որ յառաջիկային պէտք է կատարուին: Եկած է ժամանակը որ նպատակադրուած աշխատինք, շատ խիզախ աշխատինք, ըստ պահանջներու եւ մեր նոր սերունդը դաստիարակենք, ըստ նոր պայմաններու...» Ապա Դամասկոսի հայոց

մէ զրկուած ծաղկեկողովը յայտարարուեցաւ, իսկ շնորհաւորագիրը կարդացուեցաւ: ՄԴՀԿ-ի Կեդրոնական վարչութեան փոխ Ա. Պետ Ընկեր Վազգէն Համալեանը՝ փոխանցեց Կեդրոնական վարչութեան շնորհաւորանքներն ու սրտի խօսքը: Ան ըսաւ. «...Տարբեր սերունդներ եկան ու անցան այս ակումբէն: Շատ սուղ հոգիներ, որ այսօր աչքիս առջեւ կուգան, մեծ մասը հանգուցեալ եղած են, մաս մը ճամբորդած են, բայց այսօր բոլորին հոգիները կը համախմբուին հոս եւ մեր ուրախ հանդիպմամբ, կը կիսեն մեր ուրախութիւնը, կը կիսեն մեր յաջողութիւնը եւ կը կիսեն նաեւ մեր նպատակադրուած աշխատանքային ծրագրերը, որ յառաջիկային պէտք է կատարուին: Եկած է ժամանակը որ նպատակադրուած աշխատինք, շատ խիզախ աշխատինք, ըստ պահանջներու եւ մեր նոր սերունդը դաստիարակենք, ըստ նոր պայմաններու...» Ապա Դամասկոսի հայոց

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Մահ Գեորգ Մանուսեանի

Յաւով իմացանք Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան նախկին անդամներէն եւ Գալիֆորնիոյ շրջանի ՌԱԿ-ի նախկին ատենապետ Գեորգ (Ճորճ) Մանուսեանի (ծնեալ 1934ին, Երուսաղէմ) մահը, որ պատահեցաւ 17 Հոկտեմբերին, Լոս Անճելոսի մէջ:



ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՄԱՆՈՒԷԼ ԱԴԱՄԵԱՆԻ մահուն տխուր առիթով մահացած Լոնտոն, Տիար Պետրոս Սէֆէրեան իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ ճանգընցելի բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տիկ. Լիլիթ Ադամեանին:

Հայոց Գիրերը

Table of Armenian letters and their Latin equivalents, organized in columns with letters in bold and their Latin counterparts in regular font.

ՄԱՐԱԶԴ



ԱՆԱՀԻՏ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ Ծնեալ՝ 1928-ին, Հայֆա

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր՝ մեծ մօր եւ հարազատին՝ ԱՆԱՀԻՏ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Հոկտեմբեր, 2021-ին, առաւօտեան ժամը 6-ին, Փասսաթինայի մէջ:

Յուզարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 27 Հոկտեմբեր, 2021, կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Քովինայի Ֆօրըսթ Լօն գերեզմանատան մէջ, իսկ գերեզմանի կարգը նոյն գերեզմանատան մէջ: Forest Lawn Covina Hills 21300 Via Verde Drive, Covina, CA 91724:

Սգակիրներ՝ Զաւակները՝ Տէր եւ Տիկ. Հրաչ Գազանճեան (Հայաստան) Տէր եւ Տիկ. Արա Գազանճեան եւ դուստրը Ֆէլիսիա (Ֆինլանտա) Դուստրը՝ Սիլվա եւ Նիք Շիրիլա Եղբայրը՝ Զարէ՛ Սարգիսեան Տաղբը՝ Զոհրապ Գազանճեան (Ֆրանսա) եւ զաւակները Տօքթ. Վիգէն Գազանճեան (Ֆրանսա) Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Գազանճեան (Ֆրանսա) Տաղբը՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Արշակ Գազանճեան եւ զաւակները՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Յուլիա Գազանճեան Տէր եւ Տիկ. Նարեկ Գազանճեան Տաղբը՝ Տէր եւ Տիկ. Անդրանիկ Գազանճեան (Լիբանան) եւ զաւակները՝ Տէր եւ Տիկ. Աւետիս Գազանճեան Տէր եւ Տիկ. Սեպուհ Գազանճեան (Լիբանան) Տէր եւ Տիկ. Կէրի Աբրահամեան (Լիբանան) Տաղբ՝ Տիկ. Մարիթան Մանուկեան (Հայաստան) եւ զաւակները Տէր եւ Տիկ. Պետիկ Մանուկեան (Հայաստան) Տէր եւ Տիկ. Արա Տաքէսեան (Հայաստան) Եւ համայն Գազանճեան, Սարգիսեան, Թաւուքճեան, Ֆաքճեան, Իմաստունեան, Պալիոգեան, Նալպանտեան, Ղաֆարի, Մանուկեան, Աբրահամեան, Քուլիզանար, Աղամանուկեան, Սայատեան, Սէվէրեան եւ Տաքէսեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

Տեղի Ունեցաւ Կոչման Արարողութիւնը

Շարունակուած էջ 6-էն

Շարունակուած էջ 15-էն

րուն (Քե.):

Իւրաքանչիւր հորիզոնականի սկիզբը կը գտնենք բաղաձայն մը. առաջինը Հ է, մնացեալները՝ փոքրիկ ձեւափոխումներով, այս բաղաձայնին ու զանազան ձայնաւորներու գումարն են: Ըստ այսմ՝ Գէեզը ունէր 26Ճ7=182 բաղաձայն եւ երկհնչիւն՝ Հ, Հա, Հու, Հի, Հե, Հը, Հո... եւ այլն:

Այս այբուբենը կը նշէր կարգ հնչիւններ, օրինակ՝ Ծ, Խ, Ճ, որ իր ժամանակին միայն հայերէնն ու եթովպերէնը ունէին:

Մետրոպոլայի այս այբուբենին հանդիպած է հաւանաբար Եղեւսիոյ մատենադարանին մէջ, որ շատ սերտ կապեր ունէր Եթովպիոյ հետ: Շատ հաւանած է զայն, եւ անոր ոճով ալ հնարած է իր այբուբենը, որուն տառերէն ոմանք ունին նոյն ձեւն ու նոյն հնչուածը (Ա, Խ, Ս, Կ, Հ, Ղ, Ն, Բ, Բ...), ուրիշներ՝ միայն ձեւը (Դ, Մ, Պ, Ո, Ռ, Փ, Ե, Է, Զ, Ս, Ի, Ք...):

Յետադրութիւն Անոնց, որոնք կ'ուզեն աւելի խոր սերտել այս բոլորը, կը թելադրեմ իմ մէկ աշխատութիւնս՝ «Մետրոպոլեան տառերու ակունքները», 2005, հրատարակութիւն «Գալուստ Կիւլպենկեան մատենաշար»-ի, Անթիլիասի տպարան, 265 էջ:

րը», 2005, հրատարակութիւն «Գալուստ Կիւլպենկեան մատենաշար»-ի, Անթիլիասի տպարան, 265 էջ:

[1] Մետրոպոլի գիւտին նոյն դարուն անդրադարձած են նաեւ Մովսէս Խորենացի եւ Ղազար Փարպեցի:

Խորենացի մասնաճակատի Մետրոպոլի եւ անոր աշակերտը, իսկ Փարպեցի իր տեղեկութիւնները քաղած է Աղան Արծրունիէն, որ Մետրոպոլի աշակերտն էր եւ Փարպեցիի ուսուցիչը:

Հետագայ դարերուն մեր գրեթէ բոլոր մատենագիրները իւրովի անդրադարձած են գիրերու գիւտին:

[2] Կորիւնի կիրարկած եզրն է այս, կը նշանակէ համաժողով, համագումար:

[3] Ենթադրելի է, որ Մետրոպոլի քանի մը տառերու առթիւ օգտուած է նաեւ եգիպտական մեհենագրերու demotika՝ ժողովրդական, բոլորածեւ տարբերակէն:

[4] Կորիւն կը շեշտէ Մետրոպոլի կրած մեծ ներդրումները՝ «աղօթքները, տքնութիւնները, արտասուալից պաղատանքները»՝ ուղղուած Աստուծոյ, որ ի վերջոյ կը պարգեւատնէ անոր այդ բախտը՝ տառերու վերջնական գիւտը, եւ Մետրոպոլի «իր սուրբ աջով հայրաբար ծնունդ կու տայ հայերէնի նոր եւ սքանչելի նշանագրերուն»:

կան Հայերուն, եղբայրակից Արքեպիսկոպոսներուն եւ եպիսկոպոսներուն, որոնք իրեն վստահեցան կաթողիկոսական ծանրագոյն բեռը. «Գոր միասնաբար պիտի կրենք ի խնդիր մեր հաւատացեալներու յաւիտենական փրկութեան» ըսաւ Ամեն. Հոգեւոր Տէրը ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը հուսկ խորհրդածութիւնը կեդրոնացուց իր քահանայական կոչումին վրայ, որ սկսաւ ճիշդ «այս աթոռանիստ տաճարին մէջ եւ այս աւագ խորանէն՝ երթալու համար հեռուներ, շատ հեռուներ»:

«Երէկ, քահանայութեան սկիզբը, հոս՝ Լիբանան, եղբայրասպան պատերազմն էր, իսկ այսօր, գահակալութեան սկզբնաւորութեան, կը վերադառնամ հոս, մշտականաչ մայրիկներուն, մեր Հայրենիքը, որպէսզի իմ քոյրերուս եւ եղբայրներուս հետ բաժնեմ ամէն տեսակ նեղութիւն ու տառապանք, որոնք մէջ կը տուայտի մեր ժողովուրդը:

Սակայն, քանի անցեալի դժուարութիւնները յաղթահարեցինք եւ վերապրեցանք միասնաբար, հետեւաբար, լիափստահ եմ որ Աստուածային Նախախնամութեամբ եւ Քրիստոսի՝ Բարի Հովիւին անհուն ողորմութեամբ, մենք պիտի կարենանք յաղթահարել նաեւ ներկայի բոլոր նեղութիւնները», ըսաւ ի մէջ այլոց Ամենապատիւ Հոգեւոր Տէրը, ապա հրաւիրեց բոլոր ներկաները «միասնաբար, ձեռք-ձեռքի տուած, սիրտ-սրտով միացած մեր Փրկչին՝ Բարի եւ Քաջ Հովիւին, ապաւինինք անոր հովանիին ու զօրութեան» եւ քարոզը աւարտեց ըսելով. «Բարի եւ Քաջ Հովիւին Մօր՝ Աստուածածին Սբ. Կոյսին պաշտպանութեան ներքեւ ապրինք այս տաղանապալից ու տառապալից ժամանակաշրջանը՝ խնդրելով անոր մայրենի յարատեւ ներկայութիւնը մեր առօրեայ կեանքին մէջ: Ամէն»:

Սուրբ Զոհի աւարտին ընթերցուեցան Կարդինալ Սանտրիի, Արամ Ա. Վեհափառի եւ Փարիզի առաջնորդ՝ գերապալջառ Միշել ՕՓըթիի շնորհաւորական պատգամները, ապա նորոժ Կաթողիկոս Պատրիարքը ընդունեց ներկաներու շնորհաւորութիւններն ու բարեմաղթանքները:

«Մանչեսթր Եունայթդ» - «Լիվերպոլ»՝ 0:5 «Չելսի»՝ Տպաուրիչ Յադրանակը՝ 7:0



Անգլիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին «Լիվերպոլ» «Օլտ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ հիւրընկալուեցաւ «Մանչեսթր Եունայթդըն»։ Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 5:0 արդիւնքով։

Առաջին 13 վայրկեանէն յետոյ «Լիվերպոլ» արդէն առջեւ էր 2:0 արդիւնքով։

«Լիվերպոլ» երրորդ, չորրորդ եւ 5-րդ կոլերը նշանակեց եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը, որը 107 կոլով դարձաւ «Փրեմիեր Լիգայի ամենաշատ կոլ նշանակած փոխինքնակցին։

«Չելսին» Լոնտոնի մէջ մրցելով «Նորուիչ Սիթիի» դէն առաւելութեան հասաւ 7:0 արդիւնքով։

Այժմ «Չելսին» 22 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը։ «Լիվերպոլ» 21 կէտով կը գտնուի աղիւսակի երկրորդն դինքին վրայ։

«Նապոլին» 8 Յադրանակէն Յետոյ Առաջին Միաւորները Կորցրեց «Ռոմայի» Հետ Խաղի Ընթացքին

Իտալիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին առաջատար «Նապոլին» հիւրընկալուեցաւ «Ռոմայէն» եւ 8 յաղթանակէն յետոյ առաջին միաւորները կորսնցուց երբ խաղը աւարտեցաւ հաւասար՝ 0:0։



«Նապոլին» աւելի շատ տիրեց գնդակին (62 տոկոս), սակայն բերդի ուղղութեամբ հարուածները գրեթէ հաւասար էին (12:10)։

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր, սակայն 66-րդ վայրկեանին անոր փոխարինեց իտալացի յարձակող Ստեֆան Էլ-Շարաւիլը։

82-րդ վայրկեանին երկրորդ դեղին քարտը ստացաւ եւ դաշտէն հեռացուեցաւ «Ռոմայի» փորձուկալացի գլխավոր մարզիչ Ժոզէ Մուրինիոն, որ անհաւասարակչիւ վարք կը դրսեւորեր՝ դժգոհելով մրցավարութենէն։

«Նապոլին» 25 կէտով առաջինն է, նոյնքան միաւոր ունի երկրորդ տեղը ընթացող «Միլանը»։ «Ռոման» չորրորդն է 16 միաւոր։

Իտալիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին «Միլանը» հիւրընկալուեցաւ «Պորտսմութհ» եւ առաւելութեան հասաւ 4:2 արդիւնքով։

Այս խաղի ընթացքին ինքնակոլի հեղինակ դարձաւ միլանեան խումբի 40-ամեայ շուետացի յարձակող Զլատան Իբրահիմովիչը, որ իր արհեստավարժ խաղարկութեան ընթացքին առաջին անգամ գրաւեց սեփական դարպասը։ Ան սակայն խաղի աւարտին մօտ դարձան կոլի հեղինակ։

«Բաւարիան» Ուժեղ Էր «Հոֆենհայմէն», Ադամեանը Դուրս Եկաւ Փոխարինման

Գերմանիայի առաջնութեան 9-րդ խաղաշրջանին ախոյեան «Բաւարիան» Միւնխենի մէջ ընդունեց «Հոֆենհայմին» եւ յաղթանակ տարաւ 4:0 հաշուով։ Գերմանացի Յուլիան Նազկիմանի գլխավորած խումբէն աչքի ինկան գերմանացի կիսապաշտպան Սերժ Գնաբերին ու յարձակողները, լեհ Ռոբերտ Լեւանդովսկին, քամերունցի էրիկ Շուպօ-Մոտինգը եւ ֆրանսացի Քինգսլի Բոմանը։

Հայաստանի հաւաքականի եւ «Հոֆենհայմի» յարձակող Սարգիս Ադամեանը պահեստայիններու մէջ էր եւ փոխարինման դուրս եկաւ 87-րդ վայրկեանին։

«Բաւարիան» 22 միաւորով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 միաւոր առաջ է երկրորդ տեղը կը գրաւէ ընթացող Դորտմունդի «Բորուսիայէն», որ հիւրընկալուեցաւ «Արմինիային» եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով։

Երրորդ տեղը կը գրաւէ 19 միաւորով ունեցող «Ֆրայբուրգը», որ

Բոնցքամարտի Եւրոպայի Երիտասարդներու Առաջնութեան Հենրիկ Սահակեանը Նուաճեց Ոսկէ Մետալ



Մոնթենեկրոյի մէջ ընթացող բոնցքամարտի Եւրոպայի երիտասարդներու առաջնութեան ընթացքին ոսկէ մետալ նուաճեց Հայաստանի խումբի անդամ Հենրիկ Սահակեանը։

Ողիմպիական հերթափոխի քուէճը ներկայացնող բոնցքամարտիկը 51 կգ կարգի եզրափակիչին առաւելութեան հասաւ Ռուսաստանի ներկայացուցիչ Ռուսլան Պիրովի նկատմամբ։

Ախոյեանին պարգևատրեց Հայաստանի բոնցքամարտի ֆետերացիայի նախագահ Յովհաննէս Յովսէփեանը։

Կանանց 60 կգ քաշային կարգին մէջ էլիդա Քոչարեանը Հայաստանի համար նուաճեց արծաթէ մետալ՝ եզրափակիչին պարտուելով ռուս մրցակիցէն։

ՊՍԺ-ն Չկարողացաւ Յադրել «Մարսելին»

Ֆրանսայի առաջնութեան 11-րդ խաղաշրջանին ՊՍԺ-ն հիւրընկալուեցաւ «Մարսելին»։ Գրանցուեցաւ ոչ մէկոլն։ Խումբերը կոլ խփել չկարողացան՝ 0:0։

Փարիզեան խումբը վերջնամասն անցուց 10 ֆուտպոլիստներով։ Վերջին յոյսի խախտման համար հեռացուեցաւ մարտաքաջի պաշտպան Աշրաֆ Հակիմին։

ՊՍԺ-ն 28 միաւորով առաջատարն է եւ 7 միաւոր առաջ է երկրորդ տեղը ընթացող «Լանսէն»։ «Մարսելը» չորրորդն է՝ 18 միաւոր։

Թիերի Անրի. Մեսին Կտրուած Է Խուճբէն Եւ Գնդակ Յաճախ Չի Ստանար, Քիչ Կը Մասնակցի Գրոհներուն



Ֆրանսայի հաւաքականի, Լոնտոնի «Արսենալի» եւ սպանական «Պարսելոնայի» նախկին յարձակող Թիերի Անրին խօսած է փարիզեան ՊՍԺ-ին արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիի խաղի մասին։

«Մեսիին կտրուած է խումբէն եւ գնդակ յաճախ չի ստանար։ Չէի ըսեր, որ ան վատ վիճակի մէջ է նոր խումբին մէջ, բայց ես կը տեսնեմ, որ մեկուսացած է։

Ես աւելի շատ կը հաւնիմ, երբ Մեսին կը գործէ կեդրոնը։ Չեմ կարծեր, որ ան օգուտ կու տայ խումբին՝ խաղալով աջ թեւի վրայ։ Կեդրոնը ան կրնայ ուիթմ հաղորդել խաղին։ Պէտք է գտնել լուծում, որպէսզի աւելի արդիւնաւէտ օգտագործուին Մեսիի, Նեյմարի եւ Մբայէի որակները միասին։

Ստոյգ տուեալներ չունիմ, բայց տպաւորութիւն է, որ անոնք շատ արդիւնաւէտ չեն միասին։ Մեսին քիչ կը մասնակցի գրոհներուն», - Անրիի խօսքը կը մէջբերէ Marca-ն։

Մեսիին Ֆրանսայի այս առաջնութեան մասնակցած է չորս հանդիպման եւ 16 տարուան ընթացքին առաջին անգամ ազգային լիգայի առաջին չորս խաղին չէ կարողացած կոլ նշանակել։

մրցակիցի խաղադաշտին մէջ 2:0 հաշուով պարտութեան մասնեց «Վոլֆսբուրգին»։